թեան սակաւ կը մասնակցի, ի բաց առեալ լեռնաբնակ գիւղե-րը՝ ուր գրեթէ արանց հաւասար կ'աշխատին։ Հովտային մա-սանց մէջ նա կ'ուռոգէ պահեզը և բամբակաթուղթը, և ի պար-տիզին կ'օգնէ առն մի քանի թեթեւ գործերու մէջ։ Տան մէջ բովանդակ հոգն ու տնտեսութիւնը կնոջ վրայ է, ինչպէս կա-թի և կաթնեղինաց տնտեսութիւնը, կարը, խոհակերութիւնն և այլն։ Նա ըստ սովորութեան պէտք է առաւօտ արշալուսին ելնէ, և այն ատեն կ'աւլէ տունը, կը կրէ ամբողջ օրուան գործ-ածութեան համար բաւական ջուր, և ապա կը սկսի խոհակե-րել. իսկ երբ կերակրոյ պատրաստութիւնը կ'աւարտէ՝ կարե-լու ձեռք կը զարնէ։ Մնացած ժամանակը՝ եթէ ամենևին գործ չկայ՝ դատարկ կ'անցընեն, կամ ձմեռները քուրսիի տակ նըս-տած՝ կը զբօսնուն։

# ՑԱՆԿ

Պաւղիկեան աղանդն . . . . . . . . . . . 365
Ափրիկէ . . . . . . . . . . . . 381
Մեծ և փոքր մարդիկ. . . . . . . . . . . 386
Բարիզու գրատունը . . . . . . . . . . . 387
Ուսումն Հայ լեզուի . . . . . . . . . . . 390
Շիգակօ . . . . . . . . . . . . 394
Ջրոյ գոյները . . . . . . . . . . . 397
Գր. Բաղրուպանեան . . . . . . . . . . 405
Ստոր. Նախիջևանու . . . . . . . . . . 409

digitised by A.R.A.R.@